

ՀԱՅ ՀՆԱՏԻՊ ԳՐՔԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՄԱՆ ՄԻ ԵԶԱԿԻ ՕՐԻՆԱԿ
Այվագյան Ա. (ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային
արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության
ծառայություն» ՊՈԱԿ, Հայաստան)

argamaivazian@aol.com

Բանալի բառեր՝ ծաղկող, մատենագիտություն, գրչագիր,
տերունական, լուսատու տառեր, գրքագիտություն:

Գիտաժողովի ուշադրությանը ներկայացվող Ավետարանը
տպագրվել է Վենետիկում 1680 թ., որը, բնականաբար, մատենագրված
է ինչպես 1880-1967 թթ. տարբեր հեղինակների (Գ. Զարբահանայան,
Ա. Ղազիկյան, Թեոդիկ, Ա. Երիցյան, Ա. Գալաճյան) կողմից հայ
հնատիպ գրքերի կազմած ցանկերում, այնպես էլ ընդգրկուն կարգով
նկարագրված է Երևանում 1988 թ. լույս տեսած 1512-1800 թթ.
հրատարակված գրքերի ամենաամբողջական մատենագիտությունում:
Ըստ վերջինիս տեղեկատվության, այս հրատարակությունից առայժմ
հայտնի է 21 օրինակ, որից 15-ը՝ Հայաստանում է, 6-ը՝ այլուր
(Թբիլիսի-2, Բեյրութ-1, Երուսաղեմ-1, Վենետիկ-1, Իրան-1):

Զեկուցման մեջ ներկայացվող այս օրինակի եզակիությունը հայոց
ծեռագիր մատյանների նման ծաղկող-մանրանկարչի կողմից նրա
մանրանկարված լինելու փաստն է: Այս հանգամանքն ակնհայտորեն
ապացույց է այն իրողությանը, որ հայ հնատիպ գրքի տպարանական
եղանակով տպագրելու գործընթացի առկայության պայմաններում,
հայոց ծեռագիր մատյաններ ստեղծելու-գրչագրելու գործը տարի առ
տարի սկսել է զիջել տպագիր գրքին: Այնուամենայնիվ, հայկական
մանրանկարչական գրչարվեստի սկզբունքները մինչև XVIII դ. վերջերը,
առանձին դեպքերում՝ մինչև XIX դ. 20-ական թվականները, ուղեկցելով

գրատպութեանը, տեղ են գտել նաև տպագրված գրքերի էջերում ու նրանց ձևավորման արվեստում:

1680 թ. Ավետարանի այս տպագիր օրինակը գրեթե գրչագիր մատյաններին բնորոշ սկզբունքներով ու եղանակով մանրանկարված է: Այսպես, այս օրինակում մինչ գրքի անվանաթերթը լրացուցիչ տեղադրվել է 12 չհամարակալված թերթ՝ 24 էջ, որոնցից 22 էջերի մակերեսների ծավալի 80-90 տոկոսի չափով կատարված են տերունական 12 (Ավետում, Ծնունդ, Ոտնվա, Մկրտություն, Նվիրաբերում, Քրիստոսի մուտքը Երուսաղեմ և այլն) և 10 ուրիշ մանրանկարներ: Վերջիններս 3 տեղից թելկարով միացված են գրքին (պրակամամուկներին): Գրքի 550 (532+18 չհամարակալված տպագիր) էջերից, մանրանկարիչ ծաղկողը 6-րդ էջից սկսած մանրանկարել է 280-ից ավելի էջեր, 91 լուսատու տառերից գունավորել է 53-ը, 12 վերջնազարդերից՝ 2-ը:

Գրքի լուսանցքներում ծաղկողը մանրանկարել է 550-ից ավելի զարդեր (էջերում 1-2 հատ), որոնց 250-ից ավելին բուսազարդեր են, 45-ը՝ մարդկային և մնացածը՝ այլ պատկերներ ու զարդարումներ:

Ցավոք, անվանաթերթից հետո կատարված ծաղկազարդումների մի մասը (մոտ 230-ը) խոնավությունից, թղթի սնկային հիվանդությունից, տարբեր՝ մինչև անտեսանելի աստիճանի գունաթափվել են:

1680 թ. տպագիր Ավետարանը 1770-ական թվականներին Զաքարիա ծաղկողի՝ բավականին հմտավարժորեն և գունաշարի հիմնական գույներով ու նրանց նրբերանգներով, ուրախ տրամադրությամբ կատարած մանրանկարների և ծաղկազարդումների շնորհիվ նախ և առաջ ձեռագիր գրքի տպավորություն ունի, և ինքնին հետաքրքիր փաստ է հայ հնատիպ գրքագիտության պատմության մեջ:

Զեկուցմանը զուգահեռ ցուցադրվում են Ավետարանի մանրանկարված էջերի լուսապատկերները, ներկայացվում են առկա հիշատակարանները:

A UNIQUE EXAMPLE OF MINIATURE – PAINTING OF OLD ARMENIAN BOOK
Ayvazyan A. (Ministry of Culture of the Republic of Armenia, “Service for the Protection of
Historical Environment and Cultural Museum-Reservations” Non-Commercial State
Organization, Armenia)